VIII

ԼՐԱՏՈՒ

DOI: 10.54503/2953-805X-2025.7-218

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԽՏԱՑԵԱԼ ԴԱՍԸՆԹԱՑՔԻՆ 40-ՐԴ ՏԱՐԻՆ. ՎԵՆԵՏԻԿԻ ՄԷՋ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Վենետիկի մէջ գործող «Պօ-Արաքս» ընկերակցութեան կազմակերպած՝ Հայ լեզուի և մշակոյթի ամառնային խտացեալ դասընթացքը բոլորեց քառասուներորդ տարին: 2025 թ. Օգոստոս 1-էն 18-ը, տարբեր տարիքի 30 ուսանողներ՝ զանազան նպատակներով, սակայն ամենքն ալ՝ հայ ոգիի հակումով, միացան հայագիտութեան և լեզուի ուսուցման շուրջ: Ուսանողները եկած էին 15 երկիրներէ, սակայն կը ներկայացնէին աւելի թիւով երկիրներ և մշակոյթներ (ԱՄՆ, Արժանթին, Բուլգարիա, Գանատա, Գերմանիա, Զվիցերիա, Թուրքիա, Իսրայէլ, Իտալիա, Իրան, Հայաստան, Հունգարիա, Մեծ Բրիտանիա, Պելճիքա, Ռումանիա, Սպանիա, Ֆրանսա): Ուսանողներէն ոմանք իրենց բարձր ուսումը կատարելապէս աւարտելու, ոմանք՝ լեզուի միջոցաւ հայ արմատներու հետ կապ հաստատելու համար դասընթացքը օգտագործեցին: Իսկ այլ ազգերու պատկանող աշակերտներն ալ պարզապէս հայ լեզուի և մշակոյթի հանդէպ մեծ հետաքրքրութիւն ունէին: Նաև կային ուսանողներ, որ հայ երաժշտութեամբ, պարով, գրականութեամբ և հոգեբանութեամբ հայ ինքնութեան նպաստ բերեցին:

Դասերը տեղի կ՚ունենային ամէն օր՝ Կիրակիներէ բացի, Վենետիկի Պատրիարքարանի ճեմարանին մէջ՝ “Studium Generale Marcianum” հիմնադրամին հետ գործակցաբար: Վենետիկի այս տարուան դասընթացքը տևեց երկու և կէս շաբաթ. ուսանողները և դասախօսները հանգրուանեցին Վենետիկի համալսարանական կեցավայրին մէջ (Camplus): Այդ ժամանակամիջոցին մասնակիցները Ս. Խաչ եկեղեցիի պատարագին երկու անգամ մասնակցելու, Վենետիկի «հայկական տեղավայրերը» պտտելու, Ս. Ղազար կղզիի մայրավանքը այցելելու և Ս. Աստուածածինի պատարագին մասնակցելէն յետոյ տօնակատարութիւն ընելու, նաև մայրավանքին թանգարան-հաւաքածոն այցելելու և ասոր շնորհիւ հայոց պատմութեան ի մօտոյ ծանօթանալու առիթը ունեցան:

Օգոստոս 11-ին՝ համալսարանական կեցավայրի սրահին մէջ, Վենետիկի դասընթացքին քառասուն տարիներու մասին հայագէտ, փիլիսոփայ, Մխիթարեան միաբանութեան անդամ և դասընթացքը կազմակերպող՝ Գերապայծառ Հայր Լևոն Պօղոս արքեպիսկոպոս Զէքիեանի կողմէ բանախօսութիւն մը տեղի ունեցաւ: Մասնակիցները տեղեկութիւններ ստացան այն շրջանաւարտներու և ուսուցիչներու մասին, որ հայագիտութեան ծանօթ դէմքեր եղած են: Նաև դասընթացքի յաղթահարած դժուարութիւններուն գիտակցելով՝ անոր գոյատևման համար պայքարելու մղումը զգացին:

Իսկ դասընթացքի 40-րդ տարուան առթիւ երկու երեկոյթներ տեղի ունեցան Վենետիկի իտալական եկեղեցիներէն մէկու մը սրահին մէջ. Օգոստոս 14-ին՝ «Վենետիկի մէջ արևմտահայերէն սորվիլ» խորագրեալ բանախօսութեամբ հանդէս եկաւ դասընթացքի առաջին մասնակիցներէն՝ ներկայիս Օքսֆորտի համալսարանի Հայագիտութեան բաժնի ղեկավար Թէո Վան Լինթ, մինչ Օգոստոս 16-ին «Արևմտահայ կրթութեան ներկան և հեռանկարները» խորագրեալ բանախօսութեամբ ելոյթ ունեցաւ Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի «Սփիւռք» Գիտաուսումնական Կեդրոնի տնօրէն Սուրէն Դանիէլեան:

Ինչպէս ամէն տարի, այս տարի ևս ուսանողները խմբաւորուած էին չորս մակարդակներու մէջ՝ սկսնակներէ և այբուբեն սերտողներէ սկսեալ մինչև վարժ հայախօսներ և հայերէնով դպրոցներու կամ համալսարաններու մէջ դասաւանդողներ: Առաջին երեք մակարդակներու հետևողները կ՚ուսումնասիրէին Արևմտահայերէնի քերականութիւն և բառա-

պաշար, Գրաւոր և Խօսակցական Արևմտահայերէն, մինչ չորրորդ մակարդակին՝ Գրաբար, Արդի հայ գրականութիւն, Լեզուի պատմութիւն և Հայ գրականութեան պատմութիւն: Ատկէ զատ, առաջին երեք մակարդակներուն կամընտրական կարելիութիւն կար հետևելու անգլերէն ուսուցանուող Հայոց պատմութեան և Գրաբարի դասերուն:

Այս տարի ևս դասընթացքը Հայ մշակոյթի հետաքրքրութիւնը վառ պահելու, Հայոց պատմութեան գիտակցելու և լեզուի գործածումը յարատևական աշխատանքով զարգացնելու փափաքն արթնցնելու ներդրումը ունեցաւ: Այդ ներդրումին նպաստող դասախօսներն էին՝ Ռաֆֆի (Ռալֆ) Սէթեան (ԱՄՆ), Ռոզին Թաշճեան-Ադամեան (Ֆրանսա), Արծուի Բախչինեան (Հայաստան), Սօսի Սուսանեան (Հունգարիա), Տորք Դալալեան (Հայաստան), Թամար Մանկասարեան (Թուրքիա) և Ճեսի Սիրական Արլէն (ԱՄՆ): Նաև Արամ Իփէքճեան դուդուկի և Արծուի Բախչինեան հայկական պարի դասերով և Ռոզին Թաշճեան՝ մասնակիցներուն երգ սորվեցնելով ներդրում բերին ուրախ երեկոներուն, որոնք Հայ ոգիին շուրջ միանալու առիթը տուին: Հետևաբար դասընթացքը անմոռանալի յուշերով և վերջին ուրախ երեկոյի կատարելութեամբ իր աւարտին հասաւ:

Միզան Բոնապեան

Կ. Պոլիս, Թարգմանչաց վարժարան